ԽՕՍՔ՝ ԱԴԱՄՈՐԴԻՆԵՐԻՆ

Հրաշագործ էք համարում դուք ձեզ,
Ով ադամորդիք, գոռոզ ու հպարտ:
Հանդէսների մէջ ձեզ գովել գիտէք,
Ձեզ համարում էք հզօր ու անպարտ ...
Դուք գիտէք ճեղքել միջուկն ուրանի,
Ըգիտէք «չափը» հենց ձեր բերանի ...
Գիտէք երկնքում անվախ սաւառնել,
Գետնին՝ երկիւղով իրար տուն մտնել ...
Գիտէք արեւի խաւարման մասին,
Բայց ոչ՝ ... ձեր հոգու ...
Պատրանքը յանախ կեանք է թւում ձեզ
Եւ դիւթանք հոգու:
Ձեզ կոչ եմ անում եւ հրաւիրում,
Հաւատքով մտէք հոգեւոր «Բաղնիք»:
Որտեղ հոսում է Արիւնն Յիսուսի,
Որտեղ «խօսում է» Արիւնն Յիսուսի,
Ձեզ՝ ձեր ախտերից մաքրելու համար ...
Մաքրուէք, փրկուէք, Նրրա շնորհքով:
Քայլէ՛ք ու գործէ՛ք Նրրա Սուրբ կամքով:
... Հողանիւթ Ադամ, մի՛ կպիր հողին:
Մի՛ ընկիր ի զուր քո կոպիտ կողին:
Մէկ է՝ քո մարմինդ հող է դառնալու,
Իսկ անմահ հոգիդ ո՞ւր է գնալու ...

ՄԻՇԱ ՍՎԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@